Ադրբեջան-Ռուսաստան.

երկկողմ հարաբերություններ՞ր, թե՞ վտանգ Արցախի համար

ԱՐԱ ԱՐԱՄՅԱՆ

Թվում է՝ **սարսափնակ ոչինչ չկա. երկու ամիս հետաձգելով այցը Ադրբեջան՝ Ռուսաստանի նախագահը Բաքվում կլինի հունվարի առաջին տասնօրյակում: Բայց հայ քաղաքական միտքը միտս էլ մի տեսակ խանդով է վերաբերվում ռուս-ադրբեջանական ամեն մի շփման, առավել եւս, որ խոսքը տվյալ դեպքում երկու երկրների նախագահների մասին է:**

Ստավախությունը պատմական հիմքեր եւս ունի. մեր դարի 20-ական թվականներին ռուսական հեղափոխության համար ոչինչ չարած ադրբեջանական կողմը, որ հասցրել էր իր մասնակցությունը բերել Բաքվի կոմունայի տապալմանը եւ 26 կոմիսարների ծերբակալությանը, որպես մանանա երկնքից, ստանում է Արցախը, Նախիջեւանը, Գարդմանը: Այսօր վերջին երկուսը հայաթափված են, բայց հերոսական, անկոտրում Արցախում հռչակված է Ադրբեջանից անկախ ու ազատ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

Անշուշտ, Ռուսաստանը՝ վիթխարի դեր է խաղացել տարածաշրջանի աշխարահաքաղաքական քարտեզի բնականոնացման գործում, ուստի ունի նաեւ իրավունքներ: Ահա հայոց մտահոգությունը ի հայտ է գալիս այն բանից, թե արդյո՞ք Բաքվում Ադրբեջանը կարող է գայթակղիչ առաջարկներ անել եւ ինչ-որ չափով ազդել Ռուսաստանի դիրքորոշման վրա: Պետք է հիշել, որ Ռուսաստանը Հայաստանի ռազմավարական դաշնակիցն է, եւ, պարզ տրամաբանությամբ, Բաքվում չպետք է լինի որեւէ բան, որը կհակասի Հայաստանի շահերին: Այստեղ կա մի կարեւորագույն հանգամանք՝ Արցախի հարցը: Այսինքն Ռուսաստանը Հայաստան ասելով ներառո՞ւմ է նաեւ Արցախը, թե՞ Արցախը դիտվում է Հայաստանից դուրս ազատագրված շրջան, որը կարող է նվեր դառնալ Բաքվի համար, եթե նա քաղաքական շրջադարձ կատարի Մոսկվայի ուղղությամբ: Ի վերջո, վերջինիս աչքում Ադրբեջանը շատ ավելի կարեւոր ռազմավարական միավոր է, քան Արցախը: Արցախը քաղաքական գին ունի, երբ Ադրբեջանը հակառուսական ալիքի վրա է: Բայց հենց որ նա փոխի իր քաղաքական կողմնորոշումը եւ դառնա Ռուսաստանի կողմնակից, ապա ինքնըստինքյան կվերանա Արցախի զսպիչ, գայթակղիչ դերը:

Անշուշտ, տհաճ դատողություններ են, բայց քաղաքական սառը դատողականությունը պահանջում է մինչեւ վերջ հստակ պատկերացնել հնարավոր սցենարներից մեկը:

Այժմ դեպքերին նայենք Բաքվի տեսանկյունից: Փաստորեն, նժարի վրա դրված է հետեւյալ հավասարակշռությունը՝ ցանկանո՞ւմ ենք ունենալ Արցախը՝ տուր անկախություն: 20-ական թվականներին հենց այդպես էլ եղավ՝ մուսավաթական Ադրբեջանը մի գիշերվա մեջ հայտարարվեց խորհրդային եւ ստացավ չնախատեսված փոխհատուցում՝ Արցախը, Նախիջեւանը, Գարդմանը: Սակայն պետք է կարծել, որ 80 տարվա վաղեմության սցենարը հազիվ թե կրկնվի: Ադրբեջանն ինքը չի ցանկանա կորցնել անկախությունը, իսկ, մյուս կողմից, թե Թուրքիան եւ թե Միացյալ Նահանգները թույլ չեն տա, որպեսզի Հորադիզից մինչեւ Լենքորան նախկին սահմանի երկայնքով, վերստին ուղեկալներ կառուցեն ռուս զինվորները: Թուրքիայի գլոբալ ծրագրերի համար Արցախի կորուստը թերեւս վճռական նշանակություն չունի, բայց Ադրբեջանի վերադարձը Ռուսաստանի գիրկը վերջնականապես ի դերեւ կհանի նրա ջանքերը Բաքվից շարժվելու դեպի Հյուսիսային Կովկաս եւ Միջին Ասիա: Ուստի, կամա-ակամա թուրքական երկու պետությունները պետք է հաշտվեն Արցախի կորստի հետ, եթե, կրկնում ենք, խուսափում են քաղաքական առեւտրի կշեռքի նժարին տեսնել անկախությունը:

2

Ադրբեջան-Ռուսաստան. երկկողմ հարաբերություններ՞, թե՞ վտանգ Արցախի համար



1

Եթե Ադրբեջանը Ռուսաստանի նախագահի այցելությունից հետո վերջնականապես համոզվի, որ զուր է Արցախի հարցում Ռուսաստանի աջակցության վրա հույս դնելը, ապա կարող է կամ բանակցությունների սահուն կրկնությամբ աստիճանաբար մոռանալ Արցախը, կամ դիմել բիրտ ուժի: Ահա այստեղ է, որ ի հայտ է գալիս Հայաստանի վճռական դերը մահացու կռիվ տալ ազատագրված Արցախի վերջնական փրկության համար: Այս դեպքում իր ողջ հզորությամբ կարող է հանդես գալ նաեւ ռազմավարական դաշնակիցը: Դրանում մեկ անգամ եւս կարելի է համոզվել ծանոթանալով Հայաստան պաշտոնական այց կատարելու առթիվ նախագահին հղած Վլադիմիր Պուտինի հետեւյալ խոսքերից. «Համոզված եմ,- գրում է ռուսական պետության ղեկավարը,- որ մեր միջեւ անմիջական եւ մտերիմ երկխոսության շարունակությունը կնպաստի ռուս-հայկական բազմակողմ համագործակցության ընդլայնմանը, այն կհասցնի որակական ավելի բարձր մակարդակի»: Հայաստանում թե իշխանությունները, թե քաղաքական ուժերը եւ թե ժողովրդի ամենալայն խավերը համոզված են, որ «որակապես ավելի բարձր մակարդակը» նախեւառաջ վերաբերում է երկրի ազգային-պետական անվտանգությանը ներառյալ Արցախը: Այս կապակցությամբ առավել պարզորոշ արտահայտվել է Անկախ պետությունների համագործակցության ինստիտուտի տնօրեն Կոնստանտին Զատուլինը, որի համոզմամբ «Մոսկվան Կովկասում միանշանակ պետք է աջակցի Երեւանին»: Ինչ վերաբերում է Արցախին, ապա նա, հարցին մոտենալով Ռուսաստանի շահերի տեսանկյունից, նպատակահարմար է համարում պահպանել այսօրվա ստատուս-քվոն: Ուշադրության է արժանի այն փաստը, որ պրն Զատուլինը հստակորեն տարբերակում է Հայաստանի եւ Արցախի առանձին դերերը ռուսական շահերի տեսանկյունից: Ինչեւէ, շատ կարեւոր է նաեւ այն, որ այսօր Ռուսաստանում համոզված են Արցախի անկախ ու ազատ հանրապետության ռազմավարական կարեւորության մեջ: Եվ եթե ռուսները նպատակահարմար չեն համարում փոխել Արցախի ներկա ստատուս-քվոն, մնում է ակնկալել, որ առաջիկայում ռուս-ադրբեջանական բարձր մակարդակի հանդիպման ծանրության կենտրոնը կտեղափոխվի երկկողմ հարաբերությունների ոլորտ: Հաղորդագրությունների համաձայն ստորագրության են նախապատրաստվում 8 համաձայնագրեր առեւտրատնտեսական, մաքսային, տրանսպորտի ոլորտներում համագործակցության վերաբերյալ: Եվ դա բնական է: Սահմանակից երկու երկրների միջեւ կուտակվել են բազմաթիվ հարցեր, որոնք լուծման կարիք ունեն: Այս հարցերը, որ քաղաքական լուրջ բարդություններ չեն հարուցում, բավարար լուծում կստանան: Նույնը չի կարելի ասել Չեչնիայի նկատմամբ Ադրբեջանի վերաբերմունքի, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի գործարկման պարագայում, եւ բանակցություններն ընդհանրապես չեն կարող մի հարվածով հաղթահարել բոլոր խոչընդոտները: Սրանց թվում նախեւառաջ Արցախի հակամարտությանն անդրադառնալիս: Կարելի է վստահ լինել, որ Ադրբեջանն ամբողջ ծավալով կվերաշարադրի իր պահանջները եւ կհայցի Ռուսաստանի աջակցությունը խնդիրն իր օգտին լուծված տեսնելու մղումով: Ռուսաստանը, որպես հյուրընկալ երկիր, պարտավոր է պատշաճ ուշադրությամբ ունկնդրել շարադրված պահանջները, բայց կրկին կարելի է համոզմունք հայտնել, որ գործնական քաղաքականության հարթության վրա նա կկողմնորոշվի միայն ու միայն իր կենսական շահերով: Սա է քաղաքականության այբուբենը, եւ արեւելյան հյուրասիրությունն ու պետական այրերի կողմից մեծարման կատարյալ արվեստը չեն կարող անկյունադարձային փոփոխություն կատարել: